«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Զեկույց

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. 2021-2022 ԹԹ.

Երևան 2022

Զեկույցը հայերեն հրատարակություն է, որը պատրաստել է «Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը Լեհաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության Լեհաստանի զարգացման գործընկերության համաֆինանսավորմամբ և լեհական Միջազգային համերաշխության հիմնադրամի գործընկերությամբ իրականացվող *«Անկախ և թափանցիկ դատական համակարգ ունենալու ճանապարհին»* ծրագրի շրջանակներում: Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները միմիայն «Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպությանն են և կարող են չհամընկնել Լեհաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության Լեհական զարգացման գործընկերության և լեհական Միջազգային համերաշխության հիմնադրամի տեսակետներին:

Դատական համակարգի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիության համեմատական վերլուծություն. 2021-2022 թթ. / Կարինե Թորոսյան

—Եր.: Հելսինկյան ասոցիացիա 2022.— 38 էջ:

© Հելսինկյան ասոցիացիա, 2022

Երախտագիտության խոսք

«Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը շնորհակալություն է հայտնում Լեհաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության Լեհական զարգացման գործընկերությանը և լեհական Միջազգային համերաշխության հիմնադրամին՝ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս դատաիրավական համակարգի ոլորտում ընթացող բարեփոխումների վերաբերյալ այս վերլուծությունն իրականացնելու և ընթերցողի ուշադրությանը ներկայացնելու հնարավորության համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 5

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 8

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ 10

ԶԵԿՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ 15

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 19

ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ 25

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 33

ԱՄՓՈՓՈՒՄ 35

ABSTRACT 37

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 38

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԺ- Ազգային ժողով

ԱՄՆ – Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԱՆ – Արդարադատության նախարարություն

ԲԴԽ - Բարձրագույն դատական խորհուրդ

ԴՄԹ - դատական մշտադիտարկման թերթիկ

ԴՄՄ - դատական մշտադիտարկման մեխանիզմ

ՀԿ – հասարակական կազմակերպություն

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

Ո – որոշում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անդամակցելով տարբեր միջազգային կառույցների՝ մասնավորապես Եվրոպայի խորհրդին, Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է մի շարք պարտավորություններ, որոնց շարքում հատկապես անկյունաքարային դեր ու նշանակություն ունեն դատահիրավական բարեփոխումները: Խորհրդային դատական համակարգը և դատավարությունը փոխարինվեցին սկզբունքորեն նոր մոտեցումներով՝ նպաստելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կարևորմանն ու դերի բարձրացմանը: ՀՀ Արդարադատության նախարարությունը նախաձեռնեց մի շարք միջոցառումներ, ստանձնեց օրենքների մշակման գործառույթ: Դատահիրավական բարեփոխումների հիմքում դրվեցին դատավարության կողմերի իրավահավասարության և մրցակցության, անմեղության կանխավարկածի, դատավորի անկախության, անաչառության և այլ ժողովրդավարական սկզբունքներ:

Հայաստանի Հանրապետության անկախության պատմության ընթացքում դատահիրավական համակարգի զարգացումը մեկնարկել է 1995 թ.-ի Սահմանադրության ընդունմամբ, որով ամրագրվեց իշխանության երեք՝ դատական, օրենսդիր և գործադիր ճյուղերի տարանջատումը, ինչպես նաև ձևավորվեցին Սահմանադրական դատարանն ու դատական համակարգի բարձրագույն մարմին Արդարադատության խորհուրդը: 1996 թվականին սկսվեց դատական և իրավական բարեփոխումների ծրագրի հայեցակարգի մշակման գործընթացը:

Հետագայում դատական և իրավական ոլորտում բարեփոխումներն իրականացվեցին երեք հիմնական ծրագրերի շրջանակում՝

- Դատահիրավական բարեփոխումների 2009-2011 թթ.-ի ռազմավարական գործողությունների ծրագիր,
- Դատական և իրավական բարեփոխումների 2012-2017 թթ.-ի ռազմավարական ծրագիր,
- Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թթ.-ի ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր, որը դեռևս իրականացման փուլում է:

Ոլորտի բարեփոխումներին հատկապես առաջնային նշանակություն տրվեց 2018 թվականի հեղափոխությունից հետո: Հայաստանի Հանրապետության անկախացման առաջին տարիներից ի վեր դատարանների անկախությունը, արդյունավետությունը, թափանցիկությունն ու հասարակության համար տեղեկատվության հասանելիությունը ոլորտի գերակա խնդիրներից են եղել: 2019-2023 թթ.-ի բարեփոխումների ծրագիրը նույնպես անդրադառնում է **դատարանների ներքին և արտաքին անկախության, անաչառության, արդյունավետության, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավման, մատչելիության, հանրային հասանելիության, հանրային**

վստահության բարձրացման և այլ հարակից խնդիրների[1]**:** Բանն այն է, որ դատական իշխանության դրական հանրային ընկալումները և վստահության բարձր աստիճանն ամուր ու անկախ դատական համակարգի կայացման էական նախապայման են, իսկ այդ համակարգի նկատմամբ հարգանքը՝ այն ներկայացնող առաջատար մասնագետների խրախուսման միջոց: Ուստի դատական իշխանության և հանրության, մասնավորապես քաղաքացիական հասարակության միջև գործընկերությունն ու արդյունավետ հաղորդակցությունն ապահովելու, ինչպես նաև հանրության շրջանում դատական իշխանության դերի, բարձր առաքելության վերաբերյալ իրազեկվածության մեծացման ուղղությամբ աշխատանքները կարևոր են և արդիական:

[1] ՀՀ արդարադատության նախարարություն, Հաշվետվություն՝ «Հայաստանի Հանրապետության Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և 2020 թվականի դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի 10-Ի N 1441-Լ որոշմամբ հաստատված գործողությունների ծրագրերի 2020 թվականի երկրորդ կիսամյակում կատարման ենթակա գործողությունների ընթացքի վերաբերյալ, 2021 թ., https://www.moj.am/legal/view/article/1376/:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հանրային կարծիքի ուսումնասիրությունների մասին համացանցում առկա սակավ տեղեկատվությունը բացահայտում է, որ թեև Հայաստանի Հանրապետությունն անկախության և ժողովրդավարական բարեփոխումների բավական երկար ու դժվարին ճանապարհ է անցել, երկրի արդարադատության համակարգը, այնուամենայնիվ, դեռևս պետք է շահի քաղաքացիների վստահությունը, լինի առավել թափանցիկ ու մատչելի հանրության բոլոր շերտերի համար: Նման իրավիճակ է տիրում նաև մի շարք հետխորհրդային երկրներում: Օրինակ, վերջերս անցկացված հարցման արդյունքների համաձայն, լեհերի 61%-ն ընդհանուր դժգոհություն է հայտնել Լեհաստանի արդարադատության համակարգից: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի այլ հետխորհրդային երկրներում նկատվում է հանրային վստահության դեֆիցիտ իրենց արդարադատության համակարգի, մասնավորապես դատարանների նկատմամբ: Այս տվյալներն արժանի են պատշաճ ուշադրության, քանի որ անկախ դատական համակարգը ցանկացած կայուն ժողովրդավարության հիմքն է[2]:

Հարկ է նշել, որ արդարադատության համակարգի լայնածավալ բացասական հանրային գնահատականները կարող են խրախուսել գործադիրին միջամտել այնպիսի ձևով, որ կարող է սպառնալ դատական իշխանության անկախությանը: Ուստի, ինչպես վերոնշյալ երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում, դատական համակարգի՝ իշխանությունից աճող օտարմանը հակազդելու հրատապ անհրաժեշտություն կա. սրա մասին բարձրաձայնում է նաև Վենետիկի հանձնաժողովը: Այս առումով էական են բաց և արդար դատաքննության իրավունքի ներուժի համարժեք գնահատումը և իրացումը: Դատարանի դահլիճում դատական մշտադիտարկողների՝ որպես քաղաքացիական հասարակության անդամների ներկայությունը կարող է մի կողմից արդարադատության իրականացման ձևի նկատմամբ հանրային վերահսկողության դեր ունենալ, մյուս կողմից հնարավորություն տալ ծանոթանալու համակարգի աշխատանքին: Առաջին մուտքը դատարան մշտադիտարկողին օգնում է ձերբազատվել որոշ բացասական կարծրատիպերից: Ավելին, ակնկալվում է, որ երկարաժամկետ հեռանկարում այն կմերձեցնի հասարակությանն ու դատարաններին՝ առանց օրենսդիր և գործադիր թևերի որևէ միջամտության, և կողմերի միջև կձևավորվի գործընկերային մշակույթ: Արդարադատության որակի և անաչառության նկատմամբ հսկողությունը վեր է առանձին դատավորների շահերից:

Դատավորներն առանձնահատուկ մասնագիտական խումբ են, և պատահական չէ, որ հասարակությունը, տալով նրանց դատելու, որոշումներ կայացնելու իշխանություն, շնորհել է նաև անկախության զգալի աստիճան: Դա, սակայն, չի նշանակում վերահսկողության բացակայություն: Կարծում ենք՝ դատական մշտադիտարկման շնորհիվ դատավորները պետք է գիտակցեն, որ հասարակությունը հետաքրքրված է դատական համակարգի գործունեությամբ,

[2] Court Watch Poland Foundation, Court Monitoring Methodology, 2013, chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://courtwatch.pl/wp-content/uploads/Court_Monitoring_Methodology.pdf

բարի համբավով և վստահելիության աստիճանով: Ավելին, մշտադիտարկումը նրանց համար խրախուսող նշանակություն ունի՝ ի հակադրություն վարչական միջոցների, որոնք երբեմն կարող են նաև խաթարել նրանց անկախությունը: Հետևաբար հասարակական վերահսկողությունն անհրաժեշտ է, որպեսզի այն բացասական երևույթները, որոնք կարող են դրսևորվել դատավորների փոքր խմբի կողմից, վերացվեն, քանի որ հակառակ դեպքում կարող են բացասաբար անդրադառնալ ողջ խմբի վրա:

Դատական նիստերը դիտարկելու իրավունքը քաղաքացիական հասարակության միակ գործիքն է՝ վերահսկելու դատական իշխանության գործունեությունը: Քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների ներգրավվածությունն այս գործընթացում լավագույն պաշտպանությունն է վարչական և այլ տեսակի վերահսկողության ընդլայնման փորձերից, որոնք կարող են սպառնալ իշխանությունների տարանջատման սկզբունքին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Ինչպես տեղական, այնպես էլ միջազգային կազմակերպությունները բազմիցս իրենց դժգոհությունն են արտահայտել, որ, ի տարբերություն իշխանության երկու ճյուղերի, որոնցում 2018 թվականի հեղափոխությունից հետո որոշ փոփոխություններ են տեղի ունեցել, դատական համակարգում իրավիճակը նույնն է: Նախանշված բարեփոխումների իրականացումը ներկա տեմպերով և կիրառվող գործիքակազմով երկար տարիներ կպահանջի: Սա արդեն կասկածի տակ է դնում ակնկալվող դրական արդյունքներին հասնելը:

Վերոնշյալ և շատ այլ խնդիրների արձագանքելու նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է դրանց համապարփակ բացահայտում, որը հնարավորություն կտա մշակելու դատական և իրավական բարեփոխումների ինչպես կարճաժամկետ ու հրատապ, այնպես էլ երկարաժամկետ միջոցառումներ: Ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի իրականացումը պետք է հանգեցնեին դատարանների և արդարադատության համակարգին առնչվող պետական ինստիտուտների վերակառուցմանը՝ անկախության և հաշվետվողականության չափանիշների համաձայն: Սա անհրաժեշտ է ժողովրդավարական պետության կայացման ու զարգացման համար, իսկ դատական համակարգի լիարժեք անկախությունը՝ հատկապես իշխանության մյուս ճյուղերին հավասարակշռելու:

E. DENIAL OF FAIR PUBLIC TRIAL

Although the law provides for an independent judiciary, the judiciary did not generally exhibit independence and impartiality. Popular trust in the impartiality of judges remained low, while civil society organizations highlighted that the justice sector retained many officials who served the previous authorities and issued rulings consistently favorable to them. Corruption of judges remained a concern. During the year NGOs continued to report on judges who had acquired significant amounts of property and assets that were disproportionate to their salaries, and they noted that the absence of vetting of all standing judges based on objective criteria – particularly of those in the Supreme Judicial Council and Constitutional Court – undermined the integrity of the judiciary.

ԱՄՆ Պետքարտուղարության ամենամյա զեկույցում նշվում է, որ թեև օրենքով նախատեսվում է անկախ դատական համակարգ, **այն հիմնականում անկախություն և անաչառություն չի ցուցաբերում: Դատավորների անաչառության նկատմամբ հանրային վստահության մակարդակը մնում է ցածր:** Քաղաքացիական հասարակության կազմա-կերպությունները մասնավորապես նշում են, որ արդարադատության հատվածում շարունակում են աշխատել նախկին իշխանություններին ծառայած բազմաթիվ պաշտոնյաներ, որոնք հետևողականորեն կայացրել են նրանց համար ձեռնտու վճիռներ[3]:

[3] U.S. Department of State, 2021 Country Reports on Human Rights Practices: Armenia, https://www.state.gov/reports/2021-country-reports-on-human-rights-practices/armenia/.

Հարցին, թե արդյոք դատական համակարգն անկախ է, 2022 թվականին հրապարակված *«Ազատությունն աշխարհում» զեկույցի* ՝Հայաստանին վերաբերող հատվածում «Ֆրիդոմ հաուս» հեղինակավոր միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը նշում է, որ **դատարանները դեռևս բախվում են համակարգային քաղաքական ազդեցության, իսկ դատական ինստիտուտները խարխլված են կոռուպցիայի պատճառով:**

F1 0-4 pts

Is there an independent judiciary? 1/4

The courts face systemic political influence, and judicial institutions are undermined by corruption. Judges reportedly feel pressure to work with prosecutors to convict defendants, and acquittal rates are extremely low. The government published a five-year judicial-reform strategy in 2019; reforms continued to be enacted in 2021, though progress has been slow.

In 2021, the parliament adopted a new Criminal Code and a new Criminal Procedure Code; the codes were drafted based on recommendations issued by the Council of Europe, and are intended to better guarantee the protection of citizens' human rights and improve trust in the judicial system. Both Codes will take effect in 2022.

Հաղորդվում է, որ դատավորները ճնշված են զգում դատախազների հետ աշխատելիս՝ ամբաստանյալներին դատապարտելու հարցում, և արդարացման մակարդակը չափազանց ցածր է: Բարեփոխումների գործընթացը դանդաղ է: 2021 թվականին խորհրդարանն ընդունեց նոր Քրեական օրենսգիրք և նոր Քրեական դատավարության օրենսգիրք, որոնք մշակվել են Եվրոպայի խորհրդի առաջարկությունների հիման վրա: Դրանց նպատակն է ավելի լավ երաշխավորել քաղաքացիների իրավունքների պաշտպանությունն ու բարձրացնել հանրային վստահությունը դատական համակարգի նկատմամբ [4] [5]:

Անդրադառնալով նախկինում ավտորիտար և հիբրիդային ռեժիմ ունեցող, իսկ այժմ ժողովրդավարական ճանապարհով ընթացող երկրների փորձին, որոնց թվում են Գամբիան, Մալայզիան, Մյանման, Թունիսը և նաև Հայաստանը [6], International IDEA հեղինակավոր միջազգային կազմակերպությունն իր «Ժողովրդավարության համաշխարհային վիճակի մասին» 2021 թվականի զեկույցում անդրադառնում է նաև պետական մարմինների՝ դատական համակարգի ու դատավորների անկախությանը աջակցելու դերին: Դրանց գործունեությունը պետք է ուղղված լինի գործադիր իշխանությունից դատարանների պաշտպանությանը, ինչպես նաև ապահովի, որ կառավարությունն իրականացնի մարդկանց կյանքն ու առողջությունը պաշտպանելու սահմանադրական և միջազգային իրավունքով ստանձնած իր դրական պարտավորությունները: Դատական մարմինները և այլ շահագրգիռ կողմեր պետք է վերանայեն դատավարության կանոնները, որպեսզի վստահ լինեն, որ դրանք բավականաչափ լայն են և

Checks and balances

- Governments must ensure that all state institutions intended to check executive power are given enough political, legal and human resources to perform their duties, and that laws and regulations facilitate congressional and judicial oversight.
- State-level actors should buttress the independence of the judiciary and the independence of judges to both protect against executive overreach and ensure that the government upholds its positive obligations under constitutional and international law to protect the life and health of the people. Judicial bodies and other stakeholders should review the rules of standing (i.e. the capacity of a party to bring a suit in court) to ensure that they are sufficiently broad to enable individuals, civil society organizations, and independent oversight and integrity institutions to bring claims to address problems of both executive overreach and inaction.

[4] Երկու օրենսգրքերը, բացառությամբ որոշ հոդվածների, ուժի մեջ են մտել 2022 թվականի հուլիսի 1-ից:

[5] Freedom House, Freedom in the World, Armenia, 2022, https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/2022.

[6] Visual Capitalist, The State of Democracy Round the World 2021, https://www.visualcapitalist.com/mapped-the-state-of-global-democracy-2022/.

հնարավորություն են տալիս անհատներին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, վերահսկողական և բարեվարքության ստուգման անկախ հաստատություններին հայցեր ներկայացնել ընդդեմ գործադիր իշխանության կողմից ոտնձգությունների և անգործության[7]:

Եվրոպայի խորհրդի և Հայաստանի Հանրապետության միջև գործընկերությունը նպատակաուղղված է աջակցելու ՀՀ-ի՝. որպես ԵԽ անդամ երկրի ջանքերին՝ իրականացնելու ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության բարելավման և իր քաղաքացիների համար դրանց իրականացումը երաշխավորելու պարտավորությունները: Այդ գործընկերության հիմնական շահառուների թվում են պետական կառույցները, քաղաքացիական հասարակությունը և լայն հանրությունը:

Ի թիվս մի շարք առանցքային միջոցառումների՝ օրենքի գերակայության բարելավումը հնարավոր է մասնավորապես արդարադատության համակարգի անկախության և արդյունա-վետության ամրապնդման, քրեա-կան արդարադատության համա-կարգի բարեփոխումների միջոցով[8]:

Human Rights

Rule of Law

- strengthening the independence and effectiveness of the justice system;
- supporting criminal reform;
- supporting the penitentiary reform through the enhancement of the health care system in prisons and the development of a fully-fledged probation service;
- raising the integrity in higher education;
- protection of personal data;
- enhancing media pluralism and freedom of expression;
- prevention and fight against corruption, money laundering and cybercrime.

Democracy

Դատարանների գործունեության թափանցիկության և հրապարակայնության բացակայությունը: Դատարանները ներկայանում են որպես փակ համակարգեր, որտեղ չկա թափանցիկություն և հրապարակայնություն: ՀՀ դատարանները ՀՀ քաղաքացու համար ներկայանում են որպես մեկուսացված միջավայր, որտեղ ամեն ինչ արվում է ստվերային պայմանավորվածությունների շրջանակներում: Եթե հեռուստա–տեսությամբ պետական իշխանության այլ թևերի վերաբերյալ բավարար տեղեկատվություն տրվում է հասարակությանը, ապա դատական նիստերի, հատկապես նախաքննական մարմինների ապօրինությունների մասին տեղեկատվությունը հասարա–կությունը ստանում է հիմնականում շշուկների տեսքով, որն ավելի է խորացնում առանց այն էլ առկա թերահավատ վերաբերմունքը արդարադատության նկատմամբ:

«ՀՀ դատաիրավական համակարգի հիմնախնդիրների արտացոլումը էլեկտրոնային լրատվամիջոցներում» մեդիա նյութերի վերլուծության արդյունքները ներկայացնող՝ դեռևս 2014 թվականին հրապարակված զեկույցում «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը որպես համակարգային խնդիր առանձնացնում է նաև դատարանների գործունեության թափանցիկության և հրա-

[7] International IDEA, Global State of Democracy Report 2021, https://www.idea.int/gsod/global-report#chapter-5-checks-on-government.

[8] Council of Europe, Office of the Directorate General of Programmes, Armenia, 2022, https://www.coe.int/en/web/programmes/armenia#{%2268853482%22:[2]}.

պարակայնության բացակայությունը[9]: Իրավիճակի նկատելի փոփոխություն չի արձանագրվել մինչ օրս:



Իրավիճակը դատական համակարգում

Նախորդ տարիներին դատական համակարգում բարեփոխումներ սկսելու ամեն փուլից առաջ եւ հետո միջազգային եւ տեղական կազմակերպությունների հետազոտություններով գնահատվել է դատարանների գործունեությունից գոհունակության աստիճանը: Դրա հիման վրա ձեւակերպվել են համակարգային խնդիրները, այսօրվա խնդիրներն էլ, հիմնականում, ձեւակերպված են:

Դատական համակարգում արված մոնիտորինգներն արձանագրել են ցածր արդյունավետություն, որի հիմնական պատճառներից մեկը դատարանների գերծանրաբեռնվածությունն է: Մեկ նիստից մյուսն ընկած ընդմիջումներն այնքան երկար են տեւում, որ կողմերը մոռանում են, թե ինչ է քննվել նախորդ նիստում եւ որտեղից պետք է շարունակել: Արդյունքում՝ խախտվում են դատական գործերի քննության ողջամիտ ժամկետները, որի հիմքով դատավորները նաեւ կարգապահական պատասխանատվության են ենթարկվում:

Անդրադառնալով անցած ժամանակահատվածում դատական համակարգում իրականացված մեծ աշխատանքներին, մասնավորապես եռաստիճան դատական համակարգի ստեղծում, դատարանների մատչելիության շարունակական ընդլայնում, դատական իշխանության անկախության ապահովման մեխանիզմների ներդնում, հարկ է նշել, որ ժամանակի պահանջներին համապատասխանող դատաիրավական համակարգ ունենալու համար դեռևս կան բազմաթիվ չլուծված խնդիրներ: Այսպես, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել անկախ և հաշվետու արդարադատության ապահովման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, արդարադատության հասանելիության, դատարանների գերծանրաբեռնվածության նվազեցման[10], արդյունավետության և թափանցիկության ապահովման ուղղությամբ:



NATIONAL ENDOWMENT FOR DEMOCRACY
SUPPORTING FREEDOM AROUND THE WORLD

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

ԶԵԿՈՒՅՑ

Երևան, 2022

Վերոնշյալ հարցերին «Հելսինկյան ասոցիացիա»-ն (այսուհետ՝ նաև Կազմակերպություն) մանրամասն անդրադարձել է նաև 2022 թ.-ի հունիսին ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թթ.-ի ռազմավարության մշտադիտարկման հիմնական ուղղությունների իրականացման ընթացքի և արդյունքների վերլուծությանը նվիրված զեկույցում, որում, խոսելով մասնավորապես դատական իշխանության և դատական համակարգի ներկա վիճակի, դատարանների գործունեության արդյունավետության մասին, նշվում է.«Ռազմավարությամբ նախատեսվում էր միջոցներ ձեռնարկել դատական

[9] «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, «ՀՀ դատաիրավական արտացոլումը համակարգի էլեկտրոնային հիմնախնդիրների լրատվամիջոցներում» զեկույց, 2021թ., chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/http://prwb.am/wp-content/uploads/2017/03/%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%AB-%D5%B0%D5%AB%D5%B4%D5%B6%D5%A1%D5%AD%D5%B6%D5%A4%D5%AB%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D6%81%D5%B8%D5%AC%D5%B8%D6%82%D5%B4%D5%A8-%D5%A7%D5%AC%D5%A5%D5%AF%D5%BF%D6%80%D5%B8%D5%B6%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AC%D6%80%D5%A1%D5%BF%D5%BE%D5%A1%D5%B4%D5%AB%D5%BB%D5%B8%D6%81%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%B4_0.pdf

[10] «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ, Դատական համակարգը պայքարում իր անկախության համար, 2020 թ., chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/http://sakharovcenter.org/files/analyses/f4d9a48689.pdf:

իշխանության և հանրության միջև համագործակցությունն ու արդյունավետ հաղորդակցությունը ապահովելու, ինչպես նաև բնակչության շրջանում դատական իշխանության դերի, բարձր առաքելության վերաբերյալ իրազեկվածությանը նպաստելու ուղղությամբ: Ծրագրված էր կազմակերպել հանրային իրազեկման աշխատանքներ և հանրությանը տեղեկացնել դատական բարեփոխումների (այդ թվում՝ դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման, կարգապահական պատասխանատվության կառուցակարգերի բարելավման) ընթացքի, դրանց արդյունքում արձանագրված հաջողությունների, դատարանների գործունեության բարելավման, արդարադատության մատչելիության բարձրացման, դատարանի անկախության երաշխիքների գործնական կիրառման մասին, ինչի արդյունքում կաճի վստահությունը դատական իշխանության նկատմամբ, ինչպես նաև կմեծանա դատավորի պաշտոնի գրավչությունը: Ռազմավարական այս ուղղության կատարման համատեքստում դժվար է վկայակոչել որևէ ակնառու կամ հիշարժան միջոցառում կամ գործողություն: Հանրությունը լայն առումով անհաղորդ է մնացել իրականացվող միջոցառումներին, ստիպված է եղել բավարարվել պաշտոնական հաղորդագրություններով, ինչն ամենևին չի նպաստել դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանը»[11]: Նշվածի գործնական հաջողությունն ու արդյունքի գնահատումը հնարավոր է բացառապես դատական իշխանության վերաբերյալ տեղեկատվության հասանելիության և դրա նկատմամբ հասարակական վստահության մակարդակով:

Վերոնշյալ բոլոր գործընթացներում «**Հելսինկյան ասոցիացիա»-ն կարևորում է հանրային վերահսկողությունն ու մասնակցությունը, հատկապես դատական մշտադիտարկման ինստիտուտի և մշակույթի ձևավորման, զարգացման ու տարածման միջոցով**: Այն իրականացնելու համար Կազմակերպությունն առաջարկում է փորձարարություն անցած մեխանիզմ և գործիք, որոնցով կարելի է **ձևավորել և զարգացնել հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հանդեպ, նպաստել դրանց խախտումների դեպքում արդյունավետ դատական պաշտպանությանը և քաղաքացիական հասարակության անդամների ավելի արդյունավետ ու լայն մասնակցությանը որոշումների կայացման գործընթացներին՝ դրանով կարևոր ներդրում ունենալով Կառավարության և նրա քաղաքականության նկատմամբ վստահության ձևավորման, ինչպես նաև հասարակության ներսում ընթացող ժողովրդավարական գործընթացներում երկրի համընդհանուր զարգացման համար միասնության ու համախմբվածության գործում:**

[11] «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության մշտադիտարկման մասին» զեկույց, «Հելսինկյան ասոցիացիա» ԻՀԿ, 2022 թ., https://bit.ly/3owEiFs:

2022 թվականի ապրիլ ամսին լեհական Միջազգային համերաշխության հիմնադրամի գործընկերությամբ Հելսինկյան ասոցիացիան նախաձեռնեց *«Անկախ և թափանցիկ դատական համակարգ ունենալու ճանապարհին»* ծրագիրը[12]: Դրա նպատակն էր մեծացնել **դատական կառույցների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը դատական մշտադիտարկման բարելավված մեխանիզմի և արդյունքների հանրայնացման միջոցով:** Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող զեկույցը ծառայում է այդ նպատակին՝ ներառելով նաև **դատական համակարգի գործունեության 2021-2022 թվականների համեմատական վերլուծություն և բարեփոխումներին ուղղված առաջարկներ**:Սա նախորդ՝ *«Իրավական ոլորտում վերապատրաստված երիտասարդ քաղաքացիները՝ որպես անկախ և թափանցիկ դատական համակարգի երաշխավորներ»* փորձարարական ծրագրի տրամաբանական շարունակությունն էր[13], որի նպատակն էր **խրախուսել երիտասարդների մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում քրեական արդարադատության համակարգի թափանցիկության մեծացման գործին[14]:**

Երկու նախաձեռնությունների ընթացքում *«Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին»* ծրագրի [15] շրջանակում կազմված *«Դատական մշտադիտարկում և լուսաբանում: Արդար դատաքննության արտաքին երաշխիքներ»* ուղեցույցում (2020 թ.) [16] առաջարկվող գործիքակազմով իրականացվեցին քրեական գործերով դատական նիստերի մշտադիտարկումներ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների նստավայրերում: Մշտադիտարկումներն իրականացվեցին նշյալ քաղաքներում ձևավորված խմբերի կողմից, որոնցում ներգրավված անդամները համակարգված եղանակով տեղեկություններ հավաքեցին դիտարկվող դատավարությունների՝ արդար դատաքննության ներպետական և միջազգային չափորոշիչներին համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև հայտնաբերեցին քրեական արդարադատության համակարգում առկա բացթողումները, հանրության համար անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությանը և դատարանների շենքային ենթակառուցվածքների՝

[12] Հելսինկյան ասոցիացիա, Հայտարարություն, https://bit.ly/3kGZ974:

[13] Հելսինկյան ասոցիացիա, Հայտարարություն, https://bit.ly/39GdbE1:

[14] Կրկին իրականացվել է Լեհաստանի Համերաշխութուն հիմնադրամի գործընկերությամբ՝ 2021 թվականին:

[15] Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին, Հայտարարություն, https://epfarmenia.am/hy/project/partnership-for-justice-reform:

[16] Ուղեցույցը նախատեսված է դատական մշտադիտարկմամբ և լուսաբանմամբ հետաքրքրված կամ դրանով զբաղվող՝ տարբեր ոլորտներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար: Այնուամենայնիվ, դրանից կարող է օգտվել յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է տեղեկանալ դատական մշտադիտարկման և լուսաբանման վերաբերյալ ու զբաղվել նշյալ գործունեությամբ: https://bit.ly/3FczIno

խոցելի խմբերի համար մատչելիությանն առնչվող խնդիրները: Ներկայացվեցին դրանց շտկմանը կամ վերացմանն ուղղված առաջարկներ:

Վերլուծության արդյունքները հերթական անգամ փաստում են, որ դատական համակարգի ապաքինման կամ առնվազն առաջնային սովորութային մակարդակում ընթացակարգային վերանայումների համար հուսալի երաշխավոր կարող են լինել դատական մշտադիտարկողները: Դատական մշտադիտարկումը ծառայեց որպես ինքնատիպ գործնական, կրթական և ուսուցողական մեթոդների համակարգ, որի միջոցով մասնակիցները զարգացրին իրենց իրավական գիտելիքն ու փորձը: Այս տեսանկյունից կարևոր էին նաև ոլորտի մասնագետների (ՀՀ ԱՆ ներկայացուցիչներ, դատավորներ, դատախազներ, փաստաբաններ և ուրիշներ) հետ մշտադիտարկման արդյունքների շուրջ աշխատանքային քննարկումները և փորձի փոխանակման հանդիպումները: Ավելին, սրանք միտված էին հետագայում արդարադատության համակարգի և քաղաքացիական հասարակության միջև արդյունավետ հաղորդակցության, գործընկերության և համակարգի գործունեության վերաբերյալ իմացության ու վստահության մակարդակի բարձրացման հարթակ դառնալուն:



Իրականացված դիտարկումների արդյունքում բացահայտված խնդիրներն (և՛ օրենսդրական և՛ համակարգային ու սովորութային բնույթ ունեցող) ու դրանց լուծումներն ամփոփված են երկու զեկույցներում՝ *«Երիտասարդները հանուն անկախ ու թափանցիկ դատական համակարգի. մշտադիտարկումը քրեական արդարադատության մեջ»* զեկույց (2021թ.) [17] և սույն՝ *«Դատական համակարգի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիության 2021-2022 թվականների համեմատական վերլուծություն»* զեկույց (2022 թ.): Զեկույցներում արձանագրված խնդիրների և առաջարկությունների մեծ մասը շարունակում է լինել արդիական:

[17] Հելսինկյան ասոցիացիա, «Երիտասարդները հանուն անկախ ու թափանցիկ դատական համակարգի. մշտադիտարկումը քրեական արդարադատության մեջ» զեկույց, 2021 թ., https://bit.ly/385iQTl:

Մեր կարծիքով՝ արդարադատության համակարգի խնդիրների լուծումները պահանջում են ոչ այնքան ֆինանսական ներդրումներ կամ օրենսդրության վերանայում, որքան մտածելակերպի և հասարակական գործելակերպերի փոփոխություններ թե՛ արդարադատության բոլոր ոլորտներում, թե՛ հասարակության շրջանում: Նմանօրինակ փոփոխություններն ավելի էժան են, քան օրենսդրականը կամ ենթակառուցվածքայինը, քանի որ լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջում: Դրանք նաև շատ ավելի արդյունավետ են, քանի որ սոցիալական նորմերին (վարքագիծ, սոցիալական խմբերի, կոլեկտիվների, կազմակերպությունների գործողությունները կարգավորող կանոնների ամբողջություն) չհամապատասխանող օրենքների ընդունման չեն հանգեցնում, և դատական համակարգը կարող է դրանք իրականացնել ինքնուրույն՝ առանց այլ պետական մարմինների ներգրավելու: Հարկ է ընդգծել, որ դատական իշխանությունն այս առումով եզակի չէ. քաղաքացիների վերահսկողական գործունեությունը(citizen watchdog activity) կարող է իրականացվել և իրականացվում է շատ այլ ոլորտներում ևս: Կազմակերպության կարծիքով՝ արդարադատության համակարգում փոփոխություններն առանցքային նշանակություն ունեն. կառուցվածքային խնդիրների հաղթահարումը կարող է էական ազդեցություն ունենալ կառավարման մյուս բոլոր ոլորտների վրա և ուղղակիորեն հանգեցնել հասարակության մասնակցության մեծացմանը և բարեկեցության բարելավմանը: Դա նաև ՀՀ Սահմանադրությամբ սահմանված արդարության ընդհանուր կարիքին (common need for justice) արձագանքելու և Սահմանադրության 7-րդ գլխում ներկայացվող արդարադատության սկզբունքներն իրականացնելու լավագույն միջոց է[18]:

ԳԼՈՒԽ 7

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հոդված 162. Արդարադատության իրականացումը

1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:
2. Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է:

Հոդված 163. Դատարանները

1. Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:
2. Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

Կազմակերպության կողմից առաջարկվող մեթոդներն ու գործընթացները միտված էին խրախուսելու քաղաքացիական հասարակության կարևոր մաս կազմող երիտասարդության (և ոչ միայն) կամքը՝ **լինելու թափանցիկ, մատչելի և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հիմնական միջազգային չափանիշներին համապատասխանող արդարադատության համակարգի օրինական պահանջատեր:**

Կազմակերպության երկարաժամկետ նպատակն է դատական մշտադիտարկման և իրավական կրթության ծրագրերի միջոցով խրախուսել մարդու իրավունքների ու ազատությունների, քաղաքացիական ազատությունների պաշտպանության, ինչպես նաև ժողովրդավարության զարգացմանն աջակցող գործողությունները՝ այդ կերպ նպաստելով, ի

[18] ՀՀ Սահմանադրություն, գլուխ 7, հոդված 162, https://www.arlis.am/documentview.aspx?docID=1:

թիվս այլ ոլորտների, նաև արդարադատության համակարգի վերաբերյալ տեղեկատվության ազատ հասանելիությանը, արդյունավետությանը, օրինականությանն ու թափանցիկությանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունն ավելի քան 25 տարի գործունեություն է իրականացնում 1975 թ.-ին Հելսինկիում ստորագրված Գործընկերության և անվտանգության մասին համաձայնագրի դրույթներին համապատասխան՝ մարդու իրավունքների հարգանքն ու պաշտպանությունը լայն հասարակության շրջանում իրականություն դարձնելու նպատակով: Այսպիսով, այն նպաստում է սահմանված տեսլականի իրականացմանը, այն է՝ **պաշտպանված անհատ՝ արդար հասարակության մեջ:**

Դատական մշտադիտարկումը կազմակերպության ռազմավարական ուղղություններից է, որի համար առանցքային են մշտադիտարկման մեջ ներգրավված մասնակիցների, ինչպես նաև ավելի լայն հանրության իրավական կրթությունն ու իրավագիտակցության զարգացումը: Կազմակերպության փորձից և ուսումնասիրություններից կարելի է եզրակացնել, որ ներկայում ՀՀ քաղաքացիների իրավագիտակցությունը ցածր է, ու, որպես դրա հետևանք, կա վախ դատարանից և անվստահություն՝ արդարադատության հանդեպ: Հասարակական կազմակերպության ջանքներն ուղղված են այդ պասիվ վերաբերմունքային կարծրատիպը կոտրելուն և ցույց տալուն, թե ինչպես կարելի է արդյունավետ վերահսկել դատական համակարգը՝ միևնույն ժամանակ հարգելով ու պահպանելով դատական անկախության սկզբունքը: Միայն անցած երեք տարիների ընթացքում հինգ հարյուրից ավելի մարդիկ հնարավորություն են ունեցել ծանոթանալու դատական մշտադիտարկման գաղափարին, մեթոդաբանությանն ու նշանակությանն արդար դատաքննության համատեքստում: Նրանց վերապատրաստման ընթացքում կազմակերպությունը կարևորել է մշտադիտարկողի իրավունքների ու պարտականությունների ուսուցումը: Փորձը ցույց է տալիս, որ դատական մշտադիտարկմանը մասնակցելը մեծ մասի համար կարևոր կրթական, քաղաքացիական և գոյութենական փորձառություն է (existential experience):

Դատական մշտադիտարկումը մշտապես տարբեր միջազգային դրամաշնորհատու կազմակերպությունների կողմից աջակցվող ծրագրերի գործողություն է, որը հնարավորություն է տալիս բացահայտելու ինչպես կազմակերպության, այնպես էլ այլոց կողմից վարվող քրեական գործերով դատավարությունների ընթացքում արձանագրված խնդիրները, օրենսդրական և սովորութային բացերը: Սրան հաջորդում են բարձրաձայնելու, լուծումներ առաջարկելու փուլերը, որոնք մեծացնում են արդարադատության իրականացման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ այդպիսով ջատագովելով դոնբաց դատաքննության իրավունքի իրացումը:

Դիտորդներն իրենց զեկույցներում բազմիցս փաստել են, որ իրենց ներկայությունն իրապես խթանում է դատարաններում արդար դատաքննության երաշխիքների կատարելագործումը և վստահություն ստեղծում դատական համակարգի նկատմամբ: Նույնն են վկայում նաև մի շարք դատավորներ և փաստաբաններ դատական մշտադիտարկողների

հետ փորձի փոխանակման և այլ ձևաչափերով հանդիպումների ժամանակ, ինչպես նաև կազմակերպության անդամների հետ առանձնազրույցներում:

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, դատական գործերի մշտադիտարկումը և դատավարության լուսաբանումն արդար դատաքննության իրավունքի ազգային և միջազգային երաշխիքների, մարդու հիմնարար իրավունք հանդիսացող արդար և դռնբաց դատաքննության իրավունքի ապահովման արդյունավետ մեխանիզմ են:

Այս տարիների ընթացում դատական մշտադիտարկում իրականացվել է ՀՀ բոլոր մարզերում և Երևանում՝ քրեական գործեր քննող տարբեր դատարաններում: Դրանց մեծ մասը քաջատեղյակ է կազմակերպության գործունեությանը և հաճախ նույնիսկ դեմքով ճանաչում է ՀԿ-ի դիտորդներին: Կազմակերպության աշխատանքին, ներառյալ նաև դիտորդության արդյունքներին իրենց ամենամյա զեկույցներում բազմիցս անդրադարձել են միջազգային հեղինակավոր կազմակերպությունները[19]:

2018 թվականի հեղափոխությունը նոր շունչ հաղորդեց քաղաքացիական հասարակությանը: Դա և՛ երկրի կառավարման գործում առավել սերտորեն և արդյունավետ կերպով ներգրավվելու հնարավորություն էր, և՛ ՀՀ Կառավարությունից թափանցիկության և հաշվետվողականության արդարացի պահանջի հրամայական: Այս առումով կազմակերպության համար նույնպես կարևորագույն ժամանակներ էին, քանի որ Հայաստանի քաղաքացիներն առավելաբար այն իրավունքների պահանջատերն էին, որոնց համար կազմակերպությունն այդքան երկար պայքարում էր:

Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց ռազմավարության այն ուղղություններին, որոնք ջատագովում են մի կողմից **քաղաքացիական հասարակության շրջանում իրավական մշակույթի ձևավորումն ու զարգացումը, իրավագիտակցության զարգացումը կրթության և իրազեկման միջոցով,** մյուս կողմից **ՀՀ-ի՝ մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների կատարման վերահսկումը քաղաքացիական հասարակության կողմից:**

Դրա արձագանքը եղան 2019-2022 թթ.-ին իրականացված *«Աջակցություն դատահիրավական բարեփոխումներին»* ծրագրի շրջանակում պրոբացիայի և Պրոբացիայի ծառայության արդի վիճակի մասին ելակետային հետազոտությունը, դրա արդյունքների հիման վրա առաջարկների ձևակերպումն ու քննարկումները շահագրգիռ կողմերի ու որոշում կայացնողների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև ոչ ՀԿ անդամ իրավապաշտպանների, ակտիվիստների, ուսանողների հետ, արդար դատաքննության խնդիրներով, մասնավորապես դատական մշտադիտարկմամբ հետաքրքրված այլ անձանց համար կարողությունների զարգացման երկօրյա մարզային դասընթացները, դատարանների մշտադիտարկման համար նախատեսված *«Դատական*

[19] Տե՛ս, օրինակ, ԱՄՆ Պետքարտուղարության (https://www.state.gov/reports/2021-country-reports-on-human-rights-practices/), «Human Rights Watch»-ի (https://www.hrw.org/europe/central-asia/armenia) մարդու իրավունքների ամենամյա զեկույցները, Քաղաքացիական համերաշխության հարթակ, www.civicsolidarity.org:

մշտադիտարկում և լուսաբանում: Արդար դատաքննության արտաքին երաշխիքներ» ձեռնարկի մշակումն ու հրապարակումը: Այն ուղեցուցային նշանակություն ունի, և դրա գործնական կիրառությունն ապահովում է դատական համակարգի մասին պատասխանատու լուսաբանում և տեղեկատվության հաղորդում: Արդարադատության ոլորտում բարեփոխումներին նպաստելու նպատակով ներգրավվեցին ինչպես տեղական, այնպես էլ միջազգային լավագույն փորձագետներ:

ՀՀ տասը մարզերում և Երևան քաղաքում դատական մշտադիտարկման երկօրյա դասընթացների շնորհիվ վերապատրաստում անցած մասնակիցների մեծ մասը շարունակեց դիտորդություն իրականացնել Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների ընդհանուր իրավասության դատարաններում 2021 և 2022 թվականներին՝ նախ «Իրավական ոլորտում վերապատրաստված երիտասարդ քաղաքացիները՝ որպես անկախ և թափանցիկ դատական համակարգի երաշխավորներ», ապա նաև «Հայաստանում անկախ և թափանցիկ դատական համակարգ ունենալու ճանապարհին» ծրագրերի շրջանակներում:

Այդպիսով, համաձայն կիրառվող մեթոդաբանության, **դատական մշտադիտարկման նպատակը** խորքային գիտելիքներ փոխանցելն ու կարողություններ ձևավորելն է: Սա հասարակական կարծիքի հարցման տեսակ չէ, այլ դատարանում (շատ հաճախ առաջին անգամ) հայտնված մարդկանց կենսափորձի վերակառուցում, սակայն առանց դիտարկվող գործերի հարցում անձնական շահագրգռվածության: Դա հատկապես կարևոր է, քանի որ մենք կարծում ենք, որ դատարանների նկատմամբ ցածր վստահության պատճառները կարող են մասամբ պայմանավորված լինել անձնական փորձի բացակայությամբ և արդարադատության համակարգի գործունեության մասին տեղեկատվության անհասանելիությամբ, հատկապես որ դատարանների մասին պատկերացումը հասարակության լայն շերտերում հիմնականում ձևավորվում է լրատվամիջոցների միջոցով, ֆիլմերի կարծրատիպերով, ոչ թե անձնական փորձով: Մշտադիտարկման մասնակիցների փաստմամբ՝ դատարանների հետ անմիջական շփումներն օգնել են փոխելու իրենց կարծիքը և ավելի բարձր գնահատելու դրանց գործունեությունը:

Այդ նպատակներն իրագործելու ճանապարհին մշտադիտարկման գործընթացի, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության[20] արդյունքում մշակվեց դատական մշտադիտարկման մեխանիզմ (այսուհետ՝ նաև ԴՄՄ), որի ճկուն կիրառումը հնարավորություն տվեց դիտորդներին ձեռք բերելու և զարգացնելու իրավական գիտելիքներ ու հմտություններ, ինչպես նաև իրականացնելու թիմային աշխատանք: ԴՄՄ-ն ներառում էր մշտադիտարկողների ուսուցման գործընթացը, մշտադիտարկման հաճախականությունը, ձևը, ինչպես նաև գործընկերությունը, հետադարձ կապը, հաշվետվողականությունը և արդյունքների ջատագովումը:

---

[20] OSCE, ODIHR, Trial Monitoring: A Reference Manual for Practitioners, Revised edition 2012, https://www.osce.org/odihr/94216.
Court Watch Poland Foundation, Court Monitoring Methodology, 2013, chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://courtwatch.pl/wp-content/uploads/Court_Monitoring_Methodology.pdf

- ✓ **Դատական մշտադիտարկողների ուսուցում**

Նախքան դատական մշտադիտարկման գործընթացում ներգրավվելը ապագա դիտորդները մասնակցում են ներպետական իրավական հարցերի, դիտորդության և հաշվետվողականության մեթոդաբանության ու ջատագովման վերաբերյալ դասընթացների: Դրանք ներառում են բովանդակային իրավական գիտելիքներ, իրավական չափանիշներ, օրենքներ, ինչպես նաև մշտադիտարկման ընթացքում արձանագրված խնդիրներ: Դասընթացավարները և վերապատրաստվողները քննարկում են խնդրահարույց թեմաները, այլ կերպ ասած՝ գորշ գոտիները, որոնց վերաբերյալ առկա տեսությունները հակասական են, կամ որոնց դեպքում անհրաժեշտ է կիրառել այլ չափանիշներ՝ փաստարկն ուժեղացնելու համար: Անդրադարձ է կատարվում մշտադիտարկման նպատակներին, սկզբունքներին, մեթոդաբանությանը, դիտորդի վարքագծի օրինակելի կանոններին, ինչպես նաև հաշվետվությունների ներկայացման պահանջներին ու հրահանգներին: Մեծ ուշադրություն է դարձվում մշտադիտարկման, փաստաթղթերի վերանայման, պաշտոնյաների և այլ դերակատարների հետ հանդիպումների և հաշվետվություն ներկայացնելու հմտությունների զարգացմանը: Մշտադիտարկողները կրում են կազմակերպության կողմից տրվող անվանաքարտ՝ դատարան անարգել մուտք գործելու համար: Դատական մշտադիտարկման պրակտիկան և իրավական հարցերով փորձագետների անցկացրած համապատասխան քննարկումներն ու աշխատանքային հանդիպումները լավագույնս հիմք են ծառայում իրավական գիտելիքների և հմտությունների հետագա հարստացման ու կատարելագործման համար:

- ✓ **Մշտադիտարկման հաճախականությունը**

Իրավական հարցերով փորձագետ համարվող մարզային համակարգողների ղեկավարությամբ դատական մշտադիտարկման տեղական խմբերն իրականացնում են կանոնավոր այցեր դատարաններ՝ քրեական գործերով նիստեր դիտարկելու նպատակով:

- ✓ **Մշտադիտարկման ձևը**

Ներկա գտնվելով քրեական գործերով նիստերին՝ մշտադիտարկողները հետևում են դատաքննություններին և դատական մշտադիտարկման թերթիկում համապատասխան գրառումներ կատարում դատավարության ընթացքի ու հայտնաբերված թերությունների վերաբերյալ:

- ✓ **Գործընկերությունը**

Մարզային համակարգողները մշտապես հաղորդակցվում են խմբի անդամների հետ՝ նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված խորհրդատվության և ուղղորդման նպատակով: Մշտական կապ է պահպանվում նաև նույն խմբի անդամների միջև՝ *բոլորը բոլորից տեղյակ են* սկզբունքի համաձայն:

- ✓ **Հետադարձ կապը**

Յուրաքանչյուր խումբ ունենում է կանոնավոր հանդիպումներ՝ մարզային համակարգողի հետ կատարված աշխատանքն ու բացահայտված խնդիրները քննարկելու, ԴՄԹ-ն լրացնելու նպատակով: Նրանք լրացնում են նաև հատուկ մշակված գնահատման ձևը:

- ✓ **Հաշվետվողականությունը**

Դատական մշտադիտարկողների կողմից լրացված ԴՄԹ-ի տեղեկությունը վերլուծվում և ամփոփվում է խնդիրների և առաջարկների մշակման համար:

- ✓ **Զատագովումը**

Զեկույցում ամփոփված տեղեկությունը լայնորեն տարածվում է և՛ տեղի, և՛ միջազգային հանրության շրջանում:

Դատական մշտադիտարկողները որպես գործիք կիրառում են դատական մշտադիտարկման թերթիկը (ԴՄԹ), որը ներառված է վերոնշյալ ուղեցույցում:

ԴՄԹ-ն կազմված է հետևյալ հիմնական բաժիններից՝

- ✓ տեղեկատվություն գործի մասին,
- ✓ տեղեկատվություն դատաքննության մասին,
- ✓ դատաքննության ընթացքում ներկայացված միջնորդություն,
- ✓ տուժողի հարցաքննություն,
- ✓ ամբաստանյալի հարցաքննություն,
- ✓ վկայի հարցաքննություն,
- ✓ փորձագետի/մասնագետի հարցաքննություն,
- ✓ դատավճիռ:

Այն ունի *օգտակար լրացուցիչ տեղեկության* առանձին բաժին, որում առաջարկվում է ներառել դատավարության կողմերի աշխատանքում գրանցված հնարավոր փոփոխությունները կամ բարելավումները՝ մշտադիտարկման նախկին փուլում հայտնաբերված թերությունների համեմատությամբ: Անհրաժեշտ է մանրամասն ներկայացնել տարբերությունները և գնահատել դրանք: Այս բաժնում մշտադիտարկողները գրանցել են նաև դատարանների շենքերի ենթակառուցվածքի, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության, զուգարանների առկայության, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի աշխատանքի վիճակի մասին տեղեկություններ:

Այդ գործիքը կամ մեթոդը հասանելի է յուրաքանչյուրի համար, ով ցանկանում է այցելել դատարան և հետևել նիստերին. այն չի պահանջում օրենքի խոր իմացություն: Ի տարբերություն մի շարք կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի՝

Հելսինկյան ասոցիացիայի մշտադիտարկման ծրագրերի նպատակն է խրախուսել քաղաքացիներին, հատկապես երիտասարդներին, այլ ոչ թե իրավական փորձագետներին, իրավագետներին կամ իրավունքի ոլորտի գործիչներին: Այն նաև թույլ է տալիս նորովի ձևավորել դատարաններից օգտվողների մեծամասնություն կազմող սովորական քաղաքացիների տեսակետները: Ի տարբերություն նրանց՝ արդարադատության ոլորտի ներկայացուցիչները, համակարգի ներսից լինելով, հակված են ընդունելու առկա բացերն ու թերությունները որպես անխուսափելի չարիք կամ նույնիսկ բնականոն վիճակ, ինչը կարող է դանդաղեցնել, երբեմն նույնիսկ խոչընդոտել ու արգելակել բարեփոխումների ընթացքը:

Մեր մեթոդաբանությունն ակնհայտորեն շատ սահմանափակումներ ունի: Շատերն են արտահայտել այն կարծիքը, թե կազմակերպության կամավոր դատական մշտադիտարկողները առանց խոր իրավական հիմքի չեն կարողանում տեսնել իրապես էական խնդիրները՝ փոխարենը կենտրոնանալով պակաս կարևոր կամ երկրորդական նշանակության խնդիրների վրա (օրինակ՝ ճշտապահություն, արդարադատության համակարգի ներկայացուցիչների վարքագիծ և այլն): Մենք քաջատեղյակ ենք հնարավոր սահմանափակումների մասին: Դրանով հանդերձ՝ հասարակական վերահսկողության ձև համարվող դատական մշտադիտարկումը կարող է իրապես լրացնել այլ մարմինների (առաջին հերթին՝ պետության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության, տարբեր խմբերի, կազմակերպությունների) հաշվետվողականության և տեղեկատվության հասանելիության վերահսկման և ապահովման մեխանիզմները:

Դատական մշտադիտարկման մեխանիզմի և մշտադիտարկման գործիք ԴՄԹ-ի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշտապես աշխատանք է տարվում դրանց կատարելագործման ուղղությամբ՝ մի կողմից գործնական կիրառման ընթացքում բացահայտված թերությունները վերացնելու միջոցով, մյուս կողմից՝ հաշվի առնելով դատական մշտադիտարկողների, ԴՄԹ-ն կիրառող գործընկեր կազմակերպությունների և այլոց կարծիքները:

ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում դատական համակարգի բարելավման նպատակով համակարգի գործունեության ուսումնասիրության, մասնավորապես դրա վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիության վիճակը պարզելու համար որպես գործիք ընտրված դատական մշտադիտարկումը դարձավ այն լավագույն միջոցը, որով հնարավոր եղավ գործընթացում ներգրավել դատահիրավական համակարգի բարեփոխմամբ շահագրգիռ մեծաթիվ անձանց՝ հիմնականում 16-30 տարեկան երիտասարդների, և նրանց ջանքերի շնորհիվ հավաքել սույն զեկույցում ներկայացվող խնդիրներն արձանագրելու և բարեփոխումներին ուղղված առաջարկները կազմելու համար անհրաժեշտ տեղեկույթը: Կարիք կար այն համադրելու 2021 թվականին այդ նույն միջոցով ձեռք բերված տեղեկույթի հետ և հիմնավոր եզրահանգումներ կատարելու համակարգում մեկ տարվա ընթացքում կատարված փոփոխությունների վերաբերյալ: 2021 թ.-ի վերոնշյալ տվյալներն ամփոփված են *«Երիտասարդները հանուն անկախ ու թափանցիկ դատական համակարգի. մշտադիտարկումը քրեական արդարադատության ոլորտում»* զեկույցում[21], որ ներկայացվել է դատական և իրավական ոլորտում գործող շուրջ 40 կառույցների, տեղական և միջազգային կազմակերպությունների, անհատների[22]:

Այն օգնեց բացահայտելու ոչ միայն ուսումնասիրության առարկա ոլորտին առնչվող համակարգային, այլև սովորութային բնույթ ունեցող խնդիրներ, օրինաչափություններ, գործելակերպեր, վերաբերմունք, որոնց նույնպես պետք է ուշադրություն դարձնել, որովհետև դրանք շոշափելի ազդեցություն են թողնում դատական համակարգի գործունեության վրա ինչպես դրական, այնպես էլ բացասական առումով: Կազմակերպության հավաքած տեղեկույթը կարող է կարևոր հենք դառնալ հետագա ուսումնասիրությունների համար, օգտագործվել յուրաքանչյուրի կողմից, ով ցանկանում է ներգրավվել դատական մշտադիտարկման կարևորագույն ու անհրաժեշտ գործընթացների մեջ և ջանքեր ներդնել երկրում նշյալ ոլորտի բարեփոխման համար: Դա կարելի է անել նաև տարբեր հանրային միջոցառումների, զեկույցների, մամլո հաղորդագրությունների, բողոքի ակցիաների, նամակագրության, նախընտրական արշավների, ուսուցման, այլ հնարավոր միջոցներով:

Նախորդ տարվա համեմատությամբ՝ այս տարի մշտադիտարկման ժամանակը թերևս կարճ էր՝ ընդամենը երեք ամիս, և խմբերի քանակը՝ մեկով պակաս, որը հանգեցրեց նաև

---

[21] «Հելսինկյան ասոցիացիա» ՀԿ, «Երիտասարդները հանուն անկախ ու թափանցիկ դատական համակարգի. մշտադիտարկումը քրեական արդարադատության ոլորտում» զեկույց, 2021 թ., https://bit.ly/395tXfS:

[22] Այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողով, Արդարադատության նախարարություն, Բարձրագույն դատական խորհուրդ, Դատական դեպարտամենտ, Գլխավոր դատախազություն, Քննչական կոմիտե, Փաստաբանների պալատ, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ԱԺ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով, Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով, ՀՀ-ում ԱՄՆ և Լեհաստանի Հանրապետության դեսպանատներ և այլն:

դատարաններ այցերի, համապատասխանաբար դիտարկված նիստերի քանակի կրճատմանը: Այնուամենայնիվ, այդ սահմանափակումները չեն խոչընդոտել մշտադիտարկման աշխատանքները և անհրաժեշտ տեղեկության ձեռքբերումը՝ հնարավորություն տալով կրկին գրանցելու առավելագույն արդյունքներ դատարանների գործունեության մեջ դեռևս գոյություն ունեցող խնդիրների բացահայտման առումով:

Մշտադիտարկումների արդյունքում ակնհայտ դարձավ, որ նախորդ տարի գրանցված հիմնական խնդիրները դեռևս պահպանվում են: Դրանք են.

- ✓ **դատարանների չափազանց ծանրաբեռնված աշխատանքային ռեժիմ,**
- ✓ **բավականին ուշացումով և առանց ուշացման պատճառը հստակեցնելու դատական նիստերը բացելը (խախտում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 317-րդ հոդվածի պահանջը),**
- ✓ **դատական նիստերը առանց բացելու հետաձգելը (հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի բազմաթիվ հոդվածների հավաքական տրամաբանությանը),**
- ✓ **դատական նիստերը հետաձգելը՝ առանց պատճառների հստակեցման (անկատար է դարձնում արդարադատության անհրաժեշտ բաղադրիչ համարվող ողջամիտ ժամկետում գործի քննությունը)[23]:**

Այս տարի դատական մշտադիտարկողներն ուշադրություն են դարձրել նաև դատարանների շենքային պայմանների խնդիրներով պայմանավորված՝ սահմանափակ կարողություններով մարդկանց համար արդարադատության մատչելիության ապահովման, խոցելի անձանց մասնակցությամբ գործերի քննության հատուկ հմտությունների (մասնավորապես ՀՀ փոքրամասնությունների լեզուներով լիցենզավորված թարգմանիչներ և այլն) լիովին կամ մասնակի բացակայությանն առնչվող մի շարք այլ խնդիրների և արձանագրել դրանք:

Բոլոր երեք խմբերը հաստատում են, որ դատարանների շենքեր մուտքի և մշտադիտարկում իրականացնելու հարցերում որևէ արգելք չեն արձանագրել: Հիմնական խնդիրը, որին բախվել են մշտադիտարկողները, նույն քրեական գործով նիստերի պարբերաբար հետաձգման հետևանքով մի քանի հաջորդական նիստերի դիտարկման անհնարինությունն է եղել, որովհետև գործով հաջորդ նիստը նշանակվել է մի քանի ամիս անց:

Ստորև ներկայացնում ենք դատական մշտադիտարկողների արձանագրած խնդիրները, որոնք պարզաբանելու նպատակով մշտադիտարկման փուլին հաջորդող փորձի փոխանակման հանդիպումների ժամանակ հարցեր են ուղղվել դատավորներին, դատախազներին ու փաստաբաններին: Որպես խնդիրների մեծ մասի հիմնապատճառ

---

[23] «Հելսինկյան ասոցիացիա» ՀԿ, «Երիտասարդները հանուն անկախ ու թափանցիկ դատական համակարգի. մշտադիտարկումը քրեական արդարադատության ոլորտում» զեկույց, 2021 թ., https://bit.ly/395tXfS:

ներկայացվել է դատարանների ծանրաբեռնվածությունը: Ոչ բոլոր պատասխաններն են դատական մշտադիտարկողները համարել սպառիչ կամ ընդունելի:

Արձանագրված խնդիրները ներկայացնում ենք հետևյալ ձևաչափով[24].

- պահպանվող խնդիրներ (նախորդ տարի արձանագրված ո՞ր խնդիրներն են դեռևս պահպանվում).

- նոր բացահայտված խնդիրներ (ի՞նչ նոր խնդիրներ են բացահայտվել).

- դրական փոփոխություններ (ի՞նչ դրական փոփոխություններ են արձանագրվել):

➢ **Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան (Կենտրոն և Շենգավիթ նստավայրեր[25] [26])**

Պահպանվող խնդիրներ

• Բազմաթիվ գործեր քննվել են դռնբաց դատական նիստում, սակայն դատական նիստերին ներկա անձանց համար դատական նիստերի դահլիճի ապակեպատ միջնորմից այն կողմ բացարձակապես ոչ մի բան լսելի չի եղել, ինչը կասկած է հարուցում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված՝ դատական վարույթի հրապարակայնության սկզբունքի ապահովման առնչությամբ, ինչպես նաև չի արտացոլում Դատական դեպարտամենտի՝ դատարանների նյութատեխնիկական ապահովվածության իրականացման պարտավորության մասին պահանջները՝ սահմանված «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» ՀՀ օրենքով և, օրենսդրական ենթակայության հիմքով, նաև ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) 2018 թվականի թիվ ԲԴԽ-25-Ո-58 որոշմամբ:

• Գրանցվել են որոշ դատավորների կողմից դատական նիստերը տեսանկարահանելու (երբեմն նաև մասնակի) արգելքի դեպքեր այն պարագայում, երբ դատավարության միայն մեկ կողմն է դեմ եղել տեսանկարահանմանը:

• Դատավորը ոչ հստակ, գրեթե անլսելի ձայնով է ամբաստանյալին ներկայացրել նրա իրավունքներն ու պարտականությունները:

• Դատավորները չեն պարզաբանել նիստերն ուշ սկսելու պատճառը, օրինակ՝ ինչու է դատական նիստը սկսել մոտ 40 րոպե ուշացմամբ այն դեպքում, երբ ինքն է ուշացումով ներկայացել նիստին, և դատավարության երկու կողմերն արդեն ներկա էին և իրեն էին սպասում:

• Ուշացումներից զատ՝ արձանագրվել են նաև դատական նիստը նշանակված ժամից շուտ սկսելու դեպքեր:

---

[24] Զեկույցի լայն հանրայնացման համար նպատակահարմար չենք գտել նշել դատական գործերի համարները, որոնք դիտարկելիս արձանագրվել են վերոնշյալ խնդիրները՝ հաշվի առնելով այն, որ զեկույցը դատական համակարգի ներկայացուցիչների բարեվարքության ներկայացման նպատակ չի հետապնդում, ինչպես նաև այն փաստը, որ մի շարք քրեական գործերի դատաքննությունը դեռևս ընթացքի մեջ է: Դրանք կներկայացվեն միայն պատկան մարմիններին՝ խնդրի հասցեատիրոջ պահանջի դեպքում:

[25] https://court.am/hy/courts/20

[26] https://court.am/hy/courts/22

Նոր բացահայտված խնդիրներ

• Դատավորը որոշել է տեղում փոխել ապացույցների հետազոտման կարգը՝ վկաներին հարցաքննելուց առաջ հարցաքննելով ամբաստանյալին, թեև պաշտպանը դեմ է եղել՝ դա համարելով ամբաստանյալի իրավունքի խախտում:

• Ինքնաբացարկի միջնորդության ներկայացման առիթով դատավորն անընդմեջ ընդհատել է պաշտպանին՝ փորձելով պարզաբանել իր՝ միջնորդության հիմքում դրված գործողությունները:

• Գրանցվել են դատական նիստի ժամանակ դատավորին ստորագրության նպատակով այլ գործով թղթեր ներկայացնելու դեպքեր, որը դատական մշտադիտարկողները համարել են դատավարության կարգի խախտում և լսվող գործից դատավորի ուշադրության շեղում:

• Դատավորները չեն օգտագործում մուրճիկը, օրինակ՝ դատավճիռը հրապարակելիս, դահլիճում կարգուկանոն հաստատելու համար:

• Դատական նիստն սկսելուց առաջ դատական կարգադրիչը սովորաբար զգուշացնում է նիստերի դահլիճում ներկա գտնվողներին անջատել բջջային հեռախոսները կամ ակտիվացնել անձայն ռեժիմը, սակայն դատական նիստերից մեկի ժամանակ դատական կարգադրիչն ինքը նախապես չէր անջատել բջջային հեռախոսը, ինչի հետևանքով հնչել է դրա զանգի բարձր ձայնը:

• Դատական նիստի ժամանակ պաշտպանը տարբեր հիմքերով մի քանի անգամ ներկայացրել էր նույն միջնորդությունը, և երբ կրկին ժամանակ է խնդրել նոր միջնորդություն ներկայացնելու համար (թեև ներկայացված միջնորդությունը դատարանը բավարարել էր), դատավորը պաշտպանի հետ խոսել է բարձր տոնով: Նիստին ներկա դատական մշտադիտարկողները սա որակել են որպես էթիկայի կոպիտ խախտում:

Դրական փոփոխություններ

• Դատական նիստերի ժամանակ կարգադրիչները պատշաճորեն հագնում են իրենց համազգեստը[27]:

• Գործերի տպագիր նյութերը հեռացվել են դատարանի միջանցքից[28]:

➢ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան (Գյումրու նստավայր[29])

Պահպանվող խնդիրներ

• Դատական նիստը մեկ տարի շարունակ հետաձգվում է, ինչը հակասում է գործի՝ արդար դատաքննության սկզբունքի պահպանմամբ իրականացմանը:

---

[27] 2021 թ.-ի զեկույցում արձանագրվել են դեպքեր, երբ դատական կարգադրիչները համազգեստը ոչ պատշաճ կամ ամբողջությամբ չեն կրել:

[28] 2021 թ.-ի զեկույցում արձանագրվել է, որ դատարանի միջանցքում առկա են քրեական գործերի նյութեր:

[29] https://court.am/hy/courts/60

• Նույն դատավորի նախապես նշանակած միմյանց հաջորդող մի քանի դատական նիստեր, տեխնիկական խնդիրների պատճառով հետաձգվելով, չեն կայանում, չեն բացվում և փակվում ժամանակին:

• Չեն պահպանվել նաև դատավորի՝ խորհրդակցական սենյակ հեռանալու կամ ընդմիջման համար հայտարարված ժամերը:

• Ամբաստանյալի հարցաքննությունը կատարվել է տեսակապի միջոցով, այնինչ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նման ընթացակարգ չի նախատեսում:

• Նույն դատական կազմով վարվող դատական նիստերը նշանակվել են նույն ժամին: Այս տեղեկությունը հաստատելու համար մշտադիտարկման խմբի անդամները կատարել են «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում զետեղված տեղեկությունների որոշ արտատպվածքներ:

• Կարգադրիչները դիտորդներին ուղղել են հարցեր, որոնք ընդհանրապես չեն բխում «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» ՀՀ օրենքի և ԲԴԽ-25-Ո-58 որոշման պահանջներից: Խնդիրը պարզաբանվել ու հարթվել է այն բանից հետո, երբ կազմակերպության ներկայացուցիչը այդ հարցով հեռախոսազրույց է ունեցել դատարանի աշխատակազմի ղեկավարի հետ:

Նոր բացահայտված խնդիրներ

• Դատական գործով նիստը մի քանի անգամ հետաձգվել է քրեակատարողական հիմնարկից ամբաստանյալի տեղափոխումը չապահովելու, մասնավորապես ուղեկցող գումարտակի մեքենայի անսարքության պատճառով:

• Դատական գործի շրջանակում պաշտպանը ներկայացրել է համաձայնեցված վարույթ կիրառելու մասին միջնորդություն: Ամբաստանյալը չի ընդունել մեղադրական եզրակացությամբ իրեն մեղսագրվող մեղքը, որքան էլ որ պաշտպանը փորձել է համոզել նրան անել դա: Հարցին որոշակի լուծում տալու նպատակով հայտարարվել է կարճ ընդմիջում, և դահլիճում ներկաներին խնդրել են դուրս գալ: Ընդմիջումից հետո ներս գնալով՝ դատական մշտադիտարկողներն արձանագրել են, որ ամբաստանյալն ընդունել է մեղքը, սակայն դատական նիստն արձանագրող սարքերն անջատելուց հետո վերջինս կրկին պնդել է, որ չի ընդունում մեղադրական եզրակացությամբ իրեն մեղսագրվող ամբողջ հանցանքը: Այդ ողջ ընթացքն անաչառ դիտորդի մոտ ամբաստանյալի նկատմամբ հոգեբանական ճնշման գործադրման կասկած է հարուցել:

• Նշյալ քրեական գործով հինգ ամբաստանյալներից չորսի նկատմամբ կիրառվել է վաղեմության ժամկետ, և դադարեցվել է քրեական հետապնդումը: Տարբեր պատճառներով և դատական նիստերի հաճախակի հետաձգումով վաղեմության ժամկետի կիրառումն անաչառ դիտորդի մոտ առաջացրել է հիմնավոր կասկած հնարավոր չարաշահման առնչությամբ:

• Դատավորների հաճախակի նշանակումների ու վերանշանակումների արդյունքում նրանց վարույթում գտնվող ընթացիկ գործերը մակագրվում են նորանշանակ դատավորներին, որը հանգեցնում է որոշ խնդիրների, օրինակ՝ գործի քննության ողջամիտ ժամկետի խախտում, վաղեմության ժամկետի կիրառում (սա կարող է նաև կոռուպցիոն ռիսկեր պարունակել):

• Դատարանի վարչական շենքի՝ հաճախակի տեղի ունեցող հոսանքազրկումը հանգեցրել է նախապես նշանակված դատական նիստերի հետաձգման և այլ խնդիրների: Օրինակ՝ հոսանքազրկման պայմանում դատական նիստը բացելով՝ նախագահող դատավորը հայտարարել է, որ նիստը վերոնշյալ պատճառով չի ձայնագրվում, սակայն չի նշել, որ անցում է կատարվում գրավոր ընթացակարգի:

• Կարգադրիչը չի թույլատրել դատական մշտադիտարկողներին մուտք գործել դատական նիստերի դահլիճ՝ պատճառաբանելով, թե ամբաստանյալը չի ներկայացել նիստին, և դատական նիստը հավանաբար չի կայանա: Սակայն ինչպես հետո պարզվել է, ամբաստանյալը գտնվել է նիստերի դահլիճում, որը հավաստել է այդ պահին դահլիճում գտնվող մեկ այլ դիտորդ:

• Դատական նիստերից մեկի ժամանակ դատավարական կողմերի ներկայության մասին տեղեկությունը ներկայացրել է դատավորը, այլ ոչ թե դատական նիստի քարտուղարը, որի գործառույթն է դա:

Դրական փոփոխություններ

• Դատարանում գտնվող մշտադիտարկողներն ազատորեն կարողացել են դատական նիստերի վերաբերյալ տեղեկություն ստանալ դատարանի աշխատակազմից կամ կարգադրիչներից[30]:

• Դատավորների թվի ավելացում:

• Դատական մշտադիտարկողների հանդեպ վերաբերմունքի փոփոխություն:

➢ **Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան (Վանաձորի նստավայր[31])**

Պահպանվող խնդիրներ

• Դատարանների (դատավորների) ծանրաբեռնվածությունը հանգեցրել է նույն քրեական գործով նիստերի պարբերաբար հետաձգմանը:

• Դատական նիստերը բացվել են մեծ ուշացումով՝ նույնիսկ նշանակված ժամից մի քանի ժամ հետո:

• Համաձայնեցված վարույթով գործի քննության ժամանակ հայերենի բավարար իմացություն չունեցող ամբաստանյալի համար չի ապահովվել թարգմանչի ծառայություն, ինչով և փաստվում է քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձի՝ օրենքով երաշխավորված իրավունքներն իրականացնելու հնարավորության իմպերատիվ պահանջը:

• Աուդիո և վիդեո ձայնագրություններն ուսումնասիրելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներն ապահովվել են դատական նիստի մասնակիցների կողմից, այնինչ դա բացառապես Դատական դեպարտամենտի պարտականությունների շրջանակում է:

---

[30] 2021 թ.-ի զեկույցում արձանագրվել է, որ եղել են դեպքեր, երբ դատարանում գտնվող դիտորդները չեն կարողացել դատական նիստերի վերաբերյալ տեղեկություն ստանալ դատարանի աշխատակազմից:

[31] https://court.am/hy/courts/51

Նոր բացահայտված խնդիրներ

• Դատական նիստի ժամանակ մեղադրող դատախազը գործով որպես վկա հանդես եկող անձի հետ խոսելիս հոգեբանական ճնշում է գործադրել նրա նկատմամբ, ինչը նույնիսկ վիճաբանության պատճառ է դարձել դատարանի դահլիճում:

• Պաշտպանական կողմի միջնորդություններն ավելի շատ են մերժվել, քան մեղադրողի միջնորդությունները, որը հիմք է տալիս եզրակացնելու, որ նախագահող դատավորը չի պահպանել անաչառություն:

• Դատական նիստը նշված ժամին չի կայացել, նախագահող դատավորը նշված ժամին նիստը չի բացել, այլ այն չկայանալու պատճառը ներկայացրել և նիստը փակված է հայտարարել այլ՝ այդ պահին ընթացող նիստի հաշվին:

• Եղել են դեպքեր, երբ դատական նիստի ժամանակ դատախազը կամ նիստի քարտուղարը խոսել են հեռախոսով:

• Արձանագրվել են դատական նիստին ներկա թարգմանչի կողմից ոչ որակյալ թարգմանության իրականացման դեպքեր:

• «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում դատական գործի մասին տեղեկությունը կա՛մ իսպառ բացակայում է, կա՛մ թերի է ներկայացված:

• Դատարանի վարչական շենքի նախասրահում տեղակայված դատական նիստերի մոնիտորը հաճախ չի աշխատում:

Դրական փոփոխություններ

• Դատական մշտադիտարկողների կողմից արձանագրվել է, որ նվազել են այն դեպքերը, երբ դատավորները ընթացող դատական նիստի ժամանակ բացել-փակել են հաջորդիվ նշանակված նիստը, քանի որ հայտնի է դարձել, որ ինչ-ինչ պատճառներով այն չի կայանալու:

• Նվազել են նաև դատական նիստերը հետաձգելու կամ նիստերն ուշացումով սկսելու դեպքերը:

Դատական համակարգում 2021-2022 թվականների իրավիճակի արդյունավետ համեմատական վերլուծության, արդյունքների վերաբերյալ առավելագույն արժանահավատ ու ճշգրիտ տեղեկատվության և օգտակար ու ընդունելի առաջարկությունների նպատակով 2022 թ.-ի ապրիլին գրավոր հարցում է ուղարկվել ՀՀ Արդարադատության նախարարություն՝ 2021 թվականին Երևանի, Գյումրու և Վանաձորի ընդհանուր իրավասության դատարաններում մշտադիտարկողների խմբերի կողմից բացահայտված խնդիրների վերաբերյալ նախարարության կարծիքի և ձեռնարկված քայլերի մասին տեղեկատվության խնդրանքով:

Ի պատասխան այդ գրության՝ Արդարադատության նախարարությունը, զեկույցին դատաիրավական բարեփոխումների տեսանկյունից անդրադառնալով, մասնավորապես նշում է. «….լրամշակման փուլում է գտնվում նոր մեթոդական հրահանգին համապատասխան մշակված՝ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թթ. ռազմավարությունը, որ մշակման փուլում քննարկվել է ոլորտային բոլոր հասարակական կազմակերպությունների և շահագրգիռ մարմինների հետ, կազմակերպվել են հանրային քննարկումներ՝ ուղղված տարբեր ռազմավարական նպատակների ուղղություններին և դրանցից բխող միջոցառումներին: Ռազմավարության նախագիծն արդեն իսկ ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ և այժմ լրամշակվում է՝ համաձայն Վարչապետի աշխատակազմի դիտարկումների»:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ.: 594015
Էլ. Փոստ՝ sinard.gevorgyan@justice.am

N //20192-2022
«06» մայիսի 2022թ.

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՆԻՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՑԻՆ

ք. Երևան, Մոսկովյան 33/6,
hahr.yerevan@gmail.com
Հեռ. (+374 10) 53 19 72

Հարգելի՛ տիկին Կարապետյանց,

Ի պատասխան 2022 թվականի ապրիլի 15-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն ստացված թիվ 101-419գրության՝ հայտնում եմ հետևյալը.

«Երիտասարդները հանուն անկախ ու թափանցիկ դատական համակարգի. Մշտադիտարկումը քրեական արդարադատության մեջ» զեկույցում (այսուհետ՝ Զեկույց) բարձրացված հարցերն առավելապես վերաբերում են գործնականում հայտնաբերված

Քրեական օրենսդրության համատեքստում անդրադառնալով զեկույցին՝ պատասխան գրության մեջ նաև նշվում է. «ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում վերջին տարիներին է ներդրվել տեսակապի միջոցով հարցաքննության ինստիտուտը, որի գործարկման համար մի դեպքում անհրաժեշտ է նախաքննության մարմնի որոշումը, մյուս դեպքում՝ հանձնարարականը: Այս առումով խնդրում եմ ընդունել ի գիտություն, որ դատարանում տեսակապով հարցաքննությունը համակարգային կարգավորման է արժանացել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով: Միևնույն ժամանակ, գործնականում զեկույցի հիման վրա դրական և շոշափելի արդյունքներ գրանցելու նպատակով առավել նպատակահարմար ենք համարում հասցեագրել առկա խնդիրները՝ անդրադառնալով նաև դրանց առաջացման հնարավոր պատճառներին»:

Անդրադառնալով գրության մեջ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում վերջին տարիներին տեսակապի միջոցով հարցաքննության ինստիտուտի ներդրման մասին ՀՀ ԱՆ-ի անդրադարձին՝ հարկ է նշել, որ նախորդ զեկույցն անդրադառնում է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գյումրու նստավայրում ընթացող գործի դատավարության ընթացքում ամբաստանյալի հարցաքննությանը այն դեպքում, երբ, ՀՀ 1998 թ.-ի հուլիսի 1-ի Քրեական դատավարության օրենսգրքում 2020 թ.-ի հունիսի 3-ին ընդունված լրացման համաձայն, նման ընթացակարգ նախատեսվում է միմիայն վկայի և տուժողի պարագայում (տե՛ս 209.1 և 209.2 հոդվածներ):

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատաիրավական համակարգի մասին նախորդ զեկույցում ներկայացված իրավիճակը և առաջարկները համեմատելով վերջին մեկ տարվա իրավիճակի վերաբերյալ ձեռք բերված տեղեկույթի հետ՝ կարելի է եզրակացնել, որ էական փոփոխություններ չեն կատարվել, ուստի առաջարկների գերակշիռ մասը մնում է արդիական: Այս ամենը պարզ է դառնում հարյուրավոր դատական նիստերի՝ նույնիսկ անզեն աչքով մշտադիտարկման արդյունքում: Ըստ այդմ, անհրաժեշտ է, որ ՀՀ իշխանությունները աչալուրջ մոտեցում ցուցաբերեն հարցին և կյանքի կոչեն համապատասխան լուծումները:

Խնդիրները և համապատասխան առաջարկները խիստ ամփոփ կերպով ներկայացում ենք ստորև.

- - դատավորների ու դատախազների վարքագծի զսպում,
- դատական նիստերն անհարկի և ոչ պատշաճ ընթացակարգով իրականացնելը կամ հետաձգելը,
- ամբաստանյալին տեսակապի միջոցով հարցաքննելը,
- դատավորի կողմից դատավարության որևէ կողմի նկատմամբ ակնհայտ բացասական կամ դրական վերաբերմունք դրսևորելը,
- դատական նիստերի տեսանկարահանումն անհիմն մերժելը,
- խորհրդակցական սենյակ հեռանալը կամ ընդմիջման համար հայտարարված ժամերը զգալի չափով խախտելը,
- նույն դատական կազմով վարվող դատական նիստերը նույն ժամին նշանակելը,
- ամբաստանյալների նկատմամբ դատավորի, դատախազի կամ պաշտպանի կողմից հոգեբանական ճնշումներ գործադրելը,
- դատավորների՝ այլ վայր աշխատելու տեղափոխման և նոր դատավորների նշանակման դեպքերում գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտումը, վաղեմության ժամկետի կիրառումը, որին առնչվող հնարավոր կոռուպցիոն քայլերի, այլ արատավոր պրակտիկաների զսպման և վերացման համար անհրաժեշտ է կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացի բարելավում և պատշաճ իրականացում պատկան մարմինների կողմից,
- դատարանների աշխատանքային ռեժիմի ծանրաբեռնվածության նվազեցման նպատակով դատավորների թվի ավելացում, դատավորների սոցիալական ապահովության աստիճանի բարձրացում (աշխատավարձ, դատավորի անկախությունն ապահովող այլ սոցիալական երաշխիքներ),
- դատավորների, դատախազների ու դատական կարգադրիչների վերապատրաստումների կարիք՝ հատկապես ուղղված սովորութային դարձած անհարգալից վարքագծի բարեփոխմանը (վերաբերմունք, պահվածք, խոսք, հագուստ և այլն),

- «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգում տեղեկատվության ժամանակին ու պատշաճ հրապարակում,
- դատական նիստերի վերաբերյալ տեղեկության հասանելիության ապահովում դատարանների վարչական շենքերում տեղադրված դատական տեղեկատվական կրպակների անխափան գործարկման ապահովման միջոցով,
- դատական նիստը վարելիս դատավորների կողմից անհրաժեշտ տեղեկույթի արագ ձեռքբերման, ինչպես նաև դատական նիստերի բնականոն ընթացքի երաշխավորման նպատակով համապատասխան ժամանակակից էլեկտրոնային սարքերով և համացանցային կապով ապահովում (օրինակ՝ iPad, ձեռքի համակարգիչ և այլն),
- դատական նիստերի դահլիճների ապահովում ժամանակակից կահավորանքով, տեխնիկական և այլ միջոցներով, այդ թվում՝ տեսաձայնային նյութերի՝ ապացույցների հետազոտման համար անհրաժեշտ տեխնիկայով, դահլիճների ապակյա պատերի դեպքում՝ դատավարությունը ներկաների համար լսելի դարձնելու նպատակով, սահմանափակ կարողություններով մարդկանց համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ և այլն,
- հավանական հոսանքազրկման դեպքերում դատարանների անխափան աշխատանքի ապահովման նպատակով դրանց զինում էլեկտրական հոսանքի ապահովման այլընտրանքային աղբյուրներով,
- քրեակատարողական հիմնարկից դատարան ամբաստանյալի տեղափոխումը չապահովելու բացառում (ուղեկցող գումարտակի մեքենայի անսարքության և այլ տեխնիկական պատճառով),
- ՀՀ տարածքում բնակվող հիմնական ազգային փոքրամասնությունների լեզուներին հմտորեն տիրապետող լիցենզավորված թարգմանչների ապահովում։

Վերոբերյալ խնդիրներն ու առաջարկները թերևս լիովին չեն ամփոփում արդարադատության իրականացմանը խանգարող, հաճախ նաև վնաս հասցնող երևույթների շրջանակը, սակայն որոշակի պատկերացում են տալիս դրա ներկա վիճակի մասին։

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ դատական մշտադիտարկման ծրագրերի մասնակիցներն ավելի փորձառու են դարձել դատական համակարգում առկա առավել կարևոր ու խորքային խնդիրներ նկատելու և վեր հանելու տեսանկյունից: Այսպես, նրանք որպես հիմնախնդիր գրանցում են նաև դատական համակարգի ներկայացուցիչների էթիկայի նուրբ դրսևորումներին վերաբերող այնպիսի խնդիրներ, որ առնչվում են վերաբերմունքին, պահվածքին, խոսելաոճին, հագուստին և այլն: Կազմակերպության փորձառու մարզային համակարգողների հետ աշխատանքը, դատական մշտադիտարկման ճկուն մեխանիզմի կիրառումը, ընթացիկ քննարկումներն ու հանդիպումները ոլորտի մասնագետների հետ մեծապես նպաստել են թերևս համեմատաբար կարճ ժամանակահատվածում մասնակիցների՝ նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելուն, դատական համակարգի հանդեպ նախկին կարծրատիպային վերաբերմունքի և մտածելակերպի փոփոխմանը, համակարգի հետ համագործակցության պատրաստակամությանը:

Չնախատեսված արդյունք է այն, որ դատական մշտադիտարկման գործունեության մեջ ներգրավվելն օգնել է ավագ դպրոցի աշակերտ որոշ մասնակիցների մասնագիտական կողմնորոշման հարցում, իսկ մասնակից ուսանողներից ոմանք էլ որոշել են փոխել իրենց ներկա մասնագիտությունը՝ շարունակելով ուսուցումն իրավագիտության ոլորտում՝ դատավորներ, դատախազներ կամ փաստաբաններ դառնալու և ոլորտ նոր՝ պետականամետ, մարդակենտրոն և արդար ու անկախ դատական համակարգի կայացմանն ուղղված մտածողություն, մոտեցումներ ու վերաբերմունք բերելու նպատակով: Հատկանշական է, որ մասնակիցների գերակշիռ մասն աղջիկներ են: Նրանց վերաբերմունքի վրա մեծ ազդեցություն են ունեցել կին փաստաբանների, իրավապաշտպանների, դատաիրավական համակարգի կին ներկայացուցիչների հետ հանդիպումները և հատկապես կին դատավորների աշխատանքին հետևելը:

Ավելի լայն իմաստով՝ դատական մշտադիտարկման ծրագրերը (court monitoring or court watch programs) դատական մշտադիտարկողների աշխատանքը կազմակերպելու, դատական գործընթացներին հետևելու, դիտարկումների արդյունքները համակարգված կերպով գրանցելու և հրապարակելու լավագույն հնարավորությունն են քաղաքացիական հասարակության համար: Այդ ծրագրերի անհրաժեշտությունն առաջացել է փաստաբանների և տուժողների փորձից, որոնք տարբեր քրեական գործերի դատաքննությունների ընթացքում դիտարկել են դատավորների կամ դատախազների (հաճախ նաև հենց հանրային պաշտպանների, երբեմն էլ՝ փաստաբանների)՝ անպատրաստ, կողմնակալ լինելու, երբեմն նույնիսկ անբարեվարք պահվածքի ու գործելաոճի դեպքեր:

Այդ ծրագրերը կարող են խրախուսել և ուժեղացնել հասարակության բազմակերպ արձագանքն արդարադատության համակարգում առկա խնդիրներին ու բացթողումներին, նպաստել հասարակության իրազեկության բարձրացմանը, բացահայտել դատավորների և

դատախազների վերապատրաստման կարիքներն ու անհրաժեշտությունը: Նմանօրինակ ծրագրեր իրականացնող քաղաքացիական հասարակության կազմակերպությունները քաջ գիտակցում և փաստում են, որ իրազեկ քաղաքացիների առկայությունն իրապես խրախուսում է արդարադատությունը և դատարաններին հաշվետու դարձնում հանրության առաջ, որին դրանք կոչված են ծառայելու: Վերոնշյալ ծրագրերը կարող են դառնալ դատահիրավական բարեփոխումների ջատագովման, լրատվամիջոցների հետ համատեղ աշխատանքի և համայնքային կրթական ծրագրերի պարտադիր տարր: Այդ առումով կարևորում ենք նաև դատական համակարգում վերաբերմունքի փոփոխության հարցը, իսկ դրա համար անհրաժեշտ և կարևոր գործոն են դատական մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունները նրանց հասանելի դարձնելը, բաց ու անկաշկանդ քննարկումներն ու հանդիպումները դատավորների, դատախազների, փաստաբանների և արդարադատության ոլորտի այլ աշխատակիցների հետ՝ նրանց կարծիքը լսելու, լավագույն փորձի փոխանակման, համագործակցության, ինչպես նաև արդարադատության համակարգի հանդեպ հասարակության շրջանում վստահության ձևավորման ու շարունակական զարգացման նպատակով, ինչի պակասն ու կարիքը դեռևս առկա են Հայաստանի Հանրապետությունում:

Ինչպես ցույց է տալիս կազմակերպության համագործակցության փորձը, հնարավոր է նաև ձևավորել կայուն ու գործուն համագործակցության ցանց դատարանի և քաղաքացիական հասարակության միջև: Սա կարող է դատական մշտադիտարկման ինստիտուտի ձևավորման հիմք դառնալ, քանի որ դատավորները, դատախազներն ու պաշտպանները արդարադատության համակարգում առկա խնդիրները շտկելու, օբյեկտիվ ու անաչառ դիտորդության վերաբերյալ այլընտրանքային մոտեցումների հետաքրքիր ու կիրառելի առաջարկներ են ներկայացնում, որոնք կարող են օգտագործվել խնդիրների լուծմանն ուղղված որոշումների ջատագովման ընթացքում՝ խնդիրը բարձրացնող անձի անունը նշելով այն դեպքում, եթե վերջինս կտա իր համաձայնությունը:

Եվ վերջապես, փորձը ցույց է տալիս, որ այն երկրները, որտեղ քաղաքացիները գիտակցում են իրավական մշակույթի անհրաժեշտությունը, այնպիսի արժեքների կարևորությունը, ինչպիսիք են թափանցիկությունը, ազնվությունն ու նվիրվածությունը երկրի կառավարման կարևորագույն ոլորտներում, հաջողում են պահպանել վստահության բարձր մակարդակ նույնիսկ տնտեսական և այլ հնարավոր այնպիսի ճգնաժամերի պայմաններում, որոնք այսօր նշմարվում են ՀՀ-ում:

ABSTRACT

The purpose of this report is to highlight the problems that hinder the effective operation of the judicial system and to provide applicable suggestions for reforms and problem solutions. The report is based on a comparative analysis of access to information on the activities of the judicial system in the Republic of Armenia between 2021-2022.

It also provides certain concerns of international and local organizations regarding the independence, impartiality, transparency and public access of the judicial system, as well as the low level of public trust in the system, among other existing problems. Accordingly, it can be recorded that despite the adoption up to present day of strategies aimed at judicial reforms, no deep and systemic changes in the field have been made, ultimately leading to a number of long lasting problems, such as incomplete access to information about the field and a low level of public trust in it.

The report is interesting and important as it provides means of uncovering and, especially, solving the aforementioned problems; it advocates for court monitoring activities by civil society, employing a tested, popular and applicable mechanism for the court monitoring.

What is more, highlighting the importance of co-operation between the judiciary and the civil society in finding solutions for a number of problems, it is believed that it can have a significant role in both the reform of the judicial system and, through it, in the establishment of human rights and democracy.

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Սույն զեկույցի նպատակն է վեր հանել դատական համակարգի արդյունավետ գործունեությունը խոչընդոտող խնդիրները և ներկայացնել իրատեսական բարեփոխումների և լուծումների առաջարկներ: Զեկույցը հիմնված է Հայաստանի Հանրապետությունում դատական համակարգի 2021-2022 թվականների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիության համեմատական վերլուծության վրա:

Ներկայացված են նաև միջազգային և տեղական կազմակերպությունների որոշ մտահոգություններ դատական համակարգի անկախության, անաչառության, թափանցիկության և հանրային հասանելիության, հասարակության շրջանում համակարգի նկատմամբ վստահության ցածր մակարդակի, այլ առկա խնդիրների վերաբերյալ: Ըստ այդմ, կարելի է արձանագրել, որ չնայած մինչ օրս ընդունվել են դատաիրավական բարեփոխումներին ուղղված ռազմավարություններ, ոլորտում խորը համակարգային փոփոխություններ չեն կատարվել՝ ի վերջո հանգեցնելով մի շարք խնդիրների տևական առկայության, այդ թվում՝ ոլորտի մասին տեղեկության թերի հասանելիության և դրա նկատմամբ հասարակության վստահության ցածր մակարդակի:

Զեկույցը հետաքրքիր և կարևոր է հատկապես այն պատճառով, որ, որպես վերոնշյալ խնդիրների բացահայտման և լուծման միջոց, այն ջատագովում է քաղաքացիական հասարակության՝դատական մշտադիտարկման գործունեությունը՝ առաջարկելով փորձարկված և պարզ մեխանիզմ ու գործիքակազմ:

Ավելին, կարևորելով դատական համակարգի և քաղաքացիական հասարակության փոխգործակցությունը մի շարք խնդիրների լուծման հարցում՝ համոզմունք է արտահայտվում, որ այն նշանակալից դեր կարող է ունենալ ինչպես դատական համակարգի բարեփոխման, այնպես էլ դրա միջոցով մարդու իրավունքների և ժողովրդավարության կայացման գործում: